

Շիրակի մարզի <<Գյումրու շտապ բուժական
Օգնության կայան>> ՓԲԸ-ի 2020-2023թթ.-ի

Զարգացման ծրագիր

1.ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ

1.1. Ընկերության կազմակերպարավական ձև- 100% պետական
սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող
առողջապահական բաժնետիրական ընկերություն (ՓԲԸ)

1.2. Իրավաբանական և գործունեության հասցեն- ՀՀ Շիրակի մարզ, ք. Գյումրի
Մազմանյան Յք

1.3. Բժշկական օգնության և սպասարկման տեսակը- Շտապ բուժական
օգնություն

1.4. Բժշկական օգնության և սպասարկման կազմակերպման ձև-
արտահովանդանոցային

1.5. Շենք շինություններ`

Երկհարկանի քարաշեն շենք-	454.21 քառ. Մետր
Ավտոտնակներ-	110.17 քառ. Մետր
Հողամաս-	0,131365 հա
Սեփականության վկայական-	N2513096, 06.10.2008թ.

1.6. Սպասարկման տարածքը- ք. Գյումրի

Սպասարկվող բնակչության թիվը- 144000

Սպասարկման շառավիղը- 15 կմ

1.7. Ավտոպարկը- ընկերության հաշվեկշռում առկա են 19 շտապ օգնության
ավտոմեքենաներ, որոնցից 5`ը` 3 <<Գազել>> մակնիշի, 1 <<Ֆորդ >>մակնիշի և 1
<<Մերսեդես- բենս>> մակնիշի ավտոմեքենաները անսարք են, բարոյապես
մաշված են, չեն շահագործվում, ենթակա են օտարման / օտարման գործընթացը
ընթացքի մեջ է/: Մնացած 14 շտապ- օգնության ավտոմեքենաները` 6 հատ
<<Ֆորդ-տրանզիտ>>մակնիշի ավտոմեքենա-2011թ. արտադրության և 8 հատ
<<Ջին-բեյ>> մակնիշի ավտոմեքենա- 2018թ. արտադրության, շահագործվում են,
գտնվում են բարվոք վիճակում, հազեցած են ժամանակակից բժշկական
սարքավորումներով: Շահագործվող բոլոր ավտոմեքենաները ապահովված են

ԷՍԳ սարքերով, թթվածնի շնչառական համակարգով, գլյուկոմետրերով, պուլսօքսիմետրերով, անհրաժեշտ բուժ-գործիքներով, իսկ Ջին-Բեյ մեքենաները նաև կարդիոմոնիտորներով և շարժական դեֆիբրիլյատորներով: Ընկերությունը ունի նաև 3 ռեանիմոբիլներ, որոնք բացի վերը նշված սարքավորումներից, ապահովված են նաև թոքերի արհեստական շնչառության ապարատներով: Շտապ-օգնության աշխատախմբերը հազեցած են անհրաժեշտ դեղորայքով՝ ՀՀ առողջապահության նախարարի հրամանի պահանջներին համապատասխան:


1.8. Կադրային հազեցվածություն- Ներկայումս ընկերությունում աշխատում են 19 բժիշկներ, որոնք զբաղեցնում են 14 հաստիք՝ անհրաժեշտ 18-ի փոխարեն: Աշխատող բժիշկների մեծ մասը ընկերությունում աշխատում են համատեղության կարգով: Բժիշկների պակասը հնարավորություն չի տալիս յուրաքանչյուր հերթափոխի ընթացքում բոլոր աշխատախմբերը ապահովել բժիշկներով, որը էապես կարող է ազդել բժշկական օգնության որակի վրա:

Ընկերությունում աշխատում են 33 բուժ. Քույրեր, 20 վարորդ-սանիտարներ:

Մա հնարավորություն է տալիս ներկայումս ապահովել յուրաքանչյուր հերթափոխի ընթացքում ապահովել 5 աշխատախմբի առկայություն, որը նպաստում է կանչերի ավելի օպերատիվ սպասարկելուն:

1.9. Աշխատանքային պայմանները- Ընկերության մասնաշենքի առաջին հարկում տեղակայված են բժիշկների, բուժ. Քույրերի, վարորդների հանգստի սենյակները, կարգավորիչների աշխատասենյակը, դեղորայքի պայուսակների լցավորման սենյակը և բուժ-գործիքների ախտահանման սենյակը, որոնք բոլորն էլ նոր վերանորոգված են: Մասնաշենքի երկրորդ հարկում տեղակայված են վարչատնտեսական աշխատողների աշխատասենյակները, որոնք վերանորոգված են մասնակիորեն: Շտապ-օգնության մեքենաները չունեն կայանելու տաք պայմաններ, ընկերությունը չունի նաև շտապ-օգնության մեքենաները չունեն նաև սանիտարական լվացման կետ: Մասնաշենքի ջեռուցումը իրականացվում է բացառապես էլեկտրաէներգիայով, քանի որ շենքը գազաֆիկացում չունի:

1.10. Ընկերության կառուցվածքը սխեմատիկորեն



2. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ

- Ընկերության առաքելությունն է - ազգաբնակչությանը շտապ և անհետաձգելի բուժական օգնության ծառայության կազմակերպումը և մատուցումը:
- Մպասարկվող տարածքի ազգաբնակչությանը անվճար, մատչելի և որակյալ առաջնային բժշկական օգնության և սպասարկման տրամադրումը՝ հավասարության և սոցիալական արդարության ապահովման սկզբունքով:
- Բնակչության առողջության պահպանման, հիվանդությունների կանխարգելման, ախտորոշման, անհրաժեշտության դեպքում՝ հիվանդանոցային բուժման կարիք ունեցողների հոսպիտալացման կազմակերպման միջոցառումների իրականացումը շտապ-օգնության մասնագետների կողմից:
- Առողջ ապրելակերպի քարոզչության և կանխարգելման ծրագրերի իրականացումը շտապ-օգնության ծառայություններ մատուցող մասնագետների կողմից ազգաբնակչության շրջանում:

3. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ընկերությունը պետական պաշտպանության շրջանակներում իրականացնում է շտապ բժշկական օգնության ծառայություն շուրջօրյա 5 աշխատախմբերի միջոցով:

1. <<Գյումրու շտապ բուժական օգնության կայան >> ՓԲԸ գործում է ՀՀ Առողջապահության նախարարի 14.01.2020թ, թիվ 85-Ա հրամանով հաստատված <<Պետության կողմից երաշխավորված անվճար և արտանյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների մատուցման մասին >> կնքված պայմանագրով նախատեսված բժշկական օգնության և սպասարկման իրականացման հետևյալ ծրագրով՝ 11001- Շտապ բժշկական օգնության ծառայություններ:
2. Ընկերությունը ւրականացնում է նաև վճարովի ծառայություններ.

 - Հիվանդին մի բնակավայրից մեկ այլ բնակավայր տեղափոխելու ընթացքում բուժօգնության կազմակերպման ծառայություն

- Հիվանդին մի բնակավայրից մեկ այլ բնակավայր /ք. Երևան/ տեղափոխելու ընթացքում բուժօգնության կազմակերպման ծառայություն
- Հիվանդին Գյումրի քաղաքի տարածքում տեղափոխման ընթացքում բուժօգնության կազմակերպման ծառայություն
- Հուղարկավորությունների ժամանակ բուժօգնության ծառայությունների կազմակերպում:
- Մասնավոր ոչ պետական միջոցառումների ժամանակ վճարովի բուժօգնության կազմակերպում
- Աճյունների տեղափոխման ծառայություն
- Հիվանդների Հայաստանի Հանրապետությունից արտերկիր՝ մինչև 2500կմ հեռավորությամբ, տեղափոխման ժամանակ բուժօգնության կազմակերպման ծառայություն:

4 ՆԱԽՈՐԴ ՊԼԱՆԱՑԻՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՁԱՆԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԸ

Ընկերությունը իր բյուջեյով նախատեսված գումարների և վճարովի մուտքերի սահմաններում իրականացրել է հետևյալ ծրագրերը

- Աշխատավարձ	72,7%
- Դեղորայք և բժշկական պարագաներ	1,6%
- Էլեկտրաէներգիա	2,9%
- Կապի ծառայություն	1,1%
- Կոմունալ ծախսեր	0,29%
- Գրասենյակային ծախսեր	0,4%
- Տնտեսական ծախսեր	0,4%
- Հիմնական միջոցների մաշվածություն	0,4%
- Վառելիք /բենզին և գազ/	8,8%
- Տրանսպորտային ծախսեր	3,3%
- Շենքի ընթացիկ նորոգում	1,5%
- Հարկեր և տուրքեր	0,21%
- Այլ ծախսեր	2,8%
- Ընդամենը	99,9%
- Շահույթ	0,1%

Ընկերության մասնաշենքի առաջին հարկը 2019թ ընթացքում վերանորոգվել են, ամբողջությամբ կահավորվել են նոր կահույքով՝ պահարաններ, սառնարաններ, հեռուստացույց, գրասեղան, մահճակալներ, անկողնային պարագաներ և այլն:

Կապիտալ վերանորոգման է ենթարկվել նաև դիսպետչերական ծառայության աշխատասենյակը, հագեցվել է համակարգիչներով, ներդրվել է GPS համակարգ:

5. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ընկերության աշխատանքների բարելավման և զարգացման ծրագիրը պայմանականորեն բաժանված է հինգ ուղղությունների՝ աշխատակազմի հետ աշխատանքներ - բուժական գործի բարելավման աշխատանքներ - տեխնիկական վերազինման աշխատանքներ - աշխատանքային պայմանների բարելավման աշխատանքներ - ֆինանսատնտեսական գործունեության բարելավում-

Աշխատակազմի հետ աշխատանք

1. Շտապ օգնության բրիգադների հիմնական աշխատող բժիշկ-մասնագետներով լրիվությամբ համալրում
2. Բժիշկների, բուժքույրերի, բուժակների շարունակական մասնագիտական վերապատրաստումների կազմակերպում
3. Շտապ օգնության բրիգադների աշխատակազմի երիտասարդացման և փորձի հաջորդական փոխանցման կազմակերպում
4. Մասնագիտացված շտապ օգնության բրիգադաների ստեղծում-ներդրում
5. Ծրագրավորված վարժանքների /տրեյնինգների անցկացում

Բուժական գործի բարելավում

1. Այլ ընկերությունների հետ փորձի փոխանակման կազմակերպում
2. Շտապ օգնության աշխատախմբերի կողմից իրականացվող բուժ.օգնության իրականացումը ստանդարտացնել գործող կլինիկական ուղեղույցներին համահունչ:
3. Շտապ օգնության բրիգադների և նեղ մասնագետ բժիշկների միջև խորհրդակցության հնարավորության ստեղծում
4. Բուժական գործի ստանդարտ հաշվետվությունների միջոցով աշխատանքի որակի գնահատման մեխանիզմների ներդրում
5. Պեղորայքի ցանկը համալրել ՀՀ Առողջապահության նախարարի գործող հրամանի պահանջներին համապատասխան:

Տեխնիկական վերազինման աշխատանքներ

1. Շտապ օգնության բրիգադայի նոր, ժամանակակից դեղորայքի պայուսակների ձեռքբերում
2. 3 հատ նոր շարժական դեֆիբրիլյատորների ձեռքբերում ավտովացման եւ շտապ օգնության ավտոմեքենաների պիտահանման եւ մանրէազերծման կետի ստեղծում (ընկերությունն արդեն գնել է «Կերիեր» մակնիշի անշփում ավտովացման սարք)
3. համացանցային կապի միջոցով, համակարգչային- պլանշետային կապով կանչի և կանչի թերթիկի փոխանցում

Աշխատանքային պայմանների բարելավում

1. Ընկերության շենքի եւ շինությունների ջեռուցումը կարելի է ապահովել կամ գազաֆիկացման կամ արևային էներգիայի կայանների տեղադրման միջոցով: Այդ կապակցությամբ անհրաժեշտ է կատարել լուրջ ուսումնասիրություններ ֆինանսական ծախսերի շահավետության նպատակով:
2. Ընկերության մասնաշենքի չվերանորոգված հատվածների կոսմետիկ վերանորոգումն իրականացում:
3. Ընկերության բակի ասֆալտապատում և ավտոմեքենաների կայանման հատվածի տանիքի կառուցման աշխատանքների իրականացում:

Ֆինասական գործունեության բարելավում

ՇՄ«Գյումրու ՇԲՕԿ»ՓԲԸ-ն միջինը տարեկան սպասարկում է 27000-ից 30000 կանչ: Գյումրի քաղաքի բնակչությունը 144000 բնակիչ է (ըստ պաշտոնական տնյալների): Նախորդ 3-4 տարիների ընթացքում ընկերության սահմանափակ բյուջեն կազմել է միջինը 165-175 մլն. դրամ : 2018-2019թթ ընթացքում պետությունը սկսել է պարբերաբար ֆինանսական մուտքեր իրականացնել ընկերության բյուջե ,հաշվի առնելով ընկերության կանչերի թվի գերակատարումը: Օրինակ 2019թ-ի ընթացքում ընկերության տարեսկզբին հաստատված բյուջեն պետության կողմից ավելացվեց 38 մլն. դրամով նախորդ տարիներին կատարողականի կասեցված գումարների հաշվին: 2019թ-ի ընթացքում ընկերությունը իրականացրել է մոտ 14 մլն. դրամի

վճարովի ծառայություններ, որը նախորդ տարիների համեմատ ևս աճել է: Վերը նշված ֆինանսական մուտքերը հնարավորություն տվեցին ընկերությանը 2019թ-ի հուլիս ամսից ավելացնել նաև հերթավոխային աշխատախմբերի թիվը 4-ից 5, որը նպաստեց շտապ օգնության ծառայության ավելի օպերատիվ իրականացման (համեմատած պակասել են կանչերի ուշացումների թիվը): Նշված ֆինանսական մուտքերը հնարավորություն տվեցին նաև կատարել ընկերության աշխատակիցների աշխատավարձերի որոշակի բարձրացում: Ձեռք բերվեցին բուժ աշխատողների համար նոր արտահագուստներ, որոնք ավելի ներկայանալի կդարձնեն ՇՕ աշխատակիցներին բնակչության շրջանում, ինչպես նաև կատարվել են լրացուցիչ դեղորայքային և վառելիքային գնումներ, որը հնարավորություն ստեղծվեց ընկերության կանոնավոր աշխատանքները իրականացնել նաև 2020թ-ի առաջին 1-2 ամիսների ընթացքում, մինչև նոր բյուջեի հաստատումը: Նշված ֆինանսական մուտքերը հնարավորություն ստեղծեցին տարին փակել առանց կրեդիտորական պարտքի, բոլոր ծախսային հոդվածներով: Ընկերության ֆինանսական վիճակի հետագա բարելավումը կարելի է իրականացնել հետևյալ ուղղություններով՝

1. Ընկերության ֆինանսական միջոցների առավել արդյունավետ օգտագործում
2. Վճարովի ծառայությանից ֆինանսական մուտքերի ավելացում
3. Ծախսերի կրճատումներ

Վճարովի ծառայությունից ֆինանսական մուտքերի ավելացում մեր կարծիքով կբերի մասնագիտացված սրտաբանական կամ վերակենդանացման աշխատախմբերի ստեղծումը, որոնք կբերեն վճարովի ծառայությունների տեսակների ավելացման և գնային փոփոխությունների: Ծախսերի կրճատումների կարելի է հասնել ավտոմեքենաների վառելանյութի, վերանորոգման ծախսերի և էլ. էներգիայի ծախսերի կրճատման միջոցով:

Ավտոմեքենաների վառելիքի ծախսերի կրճատման ուղղությանները հետևյալներն են՝

1. Հարկավոր է մեքենաների վազքը փոքրացնել բենզինի ծախսը կրճատելու համար, այդ նպատակով հարկավոր է հասնել նրան որ կանչերի 50-70% կատարվեն ռադիոկապի միջոցով:
2. Դիսպետչերական ծառայության որակի բարելավում՝ լոկատորային համակարգից ակտիվ օգտվելը, աշխատանքի կազմակերպման օպերատիվության բարձրացումը:
3. Աշխատանքի լարված ժամանակին Գյումրի քաղաքում նշանակել հատուկ կանգառի կետեր մեքենաների հետվերադարձի քանակը կրճատելու նպատակով: Այս միջոցառումները կբերեն բենզինի ծախսերի պակասեցման և մեքենաների մաշվածության քչացման:

Էլ. էներգիայի ծախսերի կրճատումը կարելի է իրականացնել կամ զազաֆիկացման կամ էլ. էներգիայի այլընտրանքային աղբյուրների ներդրմամբ:

Ավտոմեքենանորոգման ծախսերի կրճատումը կարելի է կատարել ավտոմեքենանորոգման կետում որոշակի ոչ խիստ մասնագիտական վերանորոգումները ընկերության աշխատակիցների միջոցով իրականացնելով, քանի

որ ներկա պահին ընկերության 20 մեքենաները ունեն բավականին քիչ մաշվածություն և վերանորոգման ծախսեր քիչ են պահանջում:

ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԵՌԱՆԿԱՐԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

Ընկերությունը ծրագրավորում է՝

Մինչև 2023թ. ամբողջությամբ անցնելու կանչերը բրիգադային հանձնելու համակարգչային պլանշետային համակարգին, որը կազմակերպելու է ընկերությունն պետական պատվերից և վճարովի ծառայությունների մուտքերից ստացված միջոցների հաշվին:

2020-2023թթ ընթացքում ընկերությունը համալրել սրտաբաններով և ստեղծել մասնագիտական սրտաբանական շտապ օգնության աշխատախումբ, որը կազմակերպելու է ընկերության պետական պատվերից և վճարովի ծառայությունների մուտքերից ստացված միջոցների հաշվին:

2020-2023թթ ընթացքում սեփական միջոցների հաշվին ստեղծել մեքենաների լվացման և սանիտարական մաքրման կետ, որի նախադրյալները ստեղծված են:

Ընկերությունը ձեռք է բերել Կարիեր ոչ կանտակտային լվացման սարք: Այն կազմակերպելու է ընկերության պետական պատվերի և վճարովի ծառայությունների մուտքերից ստեղծված միջոցների հաշվին (700 հազարից 1 միլ դրամի սահմաններում):

ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ՄԻՋԱՎԱՅՐՈՒՄ ՀՆԱՐԱՎՈՐ ԵՐԵՎՈՒՅԹՆԵՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ

1. Հնարավոր ռիսկերը՝

Բենզինի, դիզ.վառելիքի, դեղորայքի և բուժ. նյութերի գնաճ մինչև 5% չափով ֆինանսական նախահաշվի մեջ կարելի է ծածկել շահույթի և նախահաշվի այլ կետերի թերակատարման միջոցով:

Էլեկտրաէներգիայի, ջրի թանկացումները նույնպես կարելի է ծածկել վճարովի ծառայությունները ընդլայնելու և նախահաշվի որոշ հոդվածներ թերակատարելու միջոցով:

Ճանապարհների վատթար վիճակը և ավտոպահեստամասերի գների աճը նախատեսվում է ծածկել խիստ անհրաժեշտ պահեստամասերի գնմամբ: Խիստ անհրաժեշտության դեպքում մեկ, երկու ավտոմեքենաների շահագործումը դադարեցնելու և ծանրաբեռնվածությունը մյուս մեքենաների վրա դնելով: Նաև մեքենաների որոշ վերանորոգումներ ընկերության ուժերով կազմակերպելու միջոցով:

Բջջային հեռախոսների օպերատորների վնասման դեպքում աշխատանքը կատարվում է ռադիոկապի միջոցով, իսկ ռադիոկապի վնասման դեպքում բջջային հեռախոսներով: Դրա պատճառով էլ ընկերությունն այսօր օգտագործում է երկու կապի միջոցներն էլ:

Տեղական էլեկտրաէներգիայի և ջեռուցման խափանման դեպքում ընկերությունն ունի պահեստային տարբեր վառելանյութերով աշխատող վառելիքներ և էլեկտրոդվիժոկ:

Երկրաշարժի և այլ արտակարգ իրավիճակներում ընկերությունը կարող է աշխատել նաև դաշտային պայմաններում, քանի որ ունի արտակարգ իրավիճակների պայմաններում աշխատող բժիշկներ և բուժքուրեր, ովքեր վերապատրաստվել են նման իրավիճակներում աշխատելու համար:

ՇՄ «Գյումրու շրջապատական
օգնության կայան» ՓԲԸ-ի



Ա.Մանուկյան